Ագրոձեռնարկատիրություն

Ագրոձեռնարկատիրությունն, ընդհանուր առմամբ, կարելի է սահմանել որպես կայուն, համայնքային ուղղվածություն ունեցող, ուղղակի շուկայավարվող գյուղատնտեսություն:

Գյուղատնտեսությունը ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են մշակաբույսերի տնկումը և բերքահավաքը: Անասնաբուծությունը վերաբերում է կենդանիների բուծմանն այնպիսի ապրանքների համար, ինչպիսիք են կաթը, ձուն կամ միսը: Անտառաբուծությունը ներառում է ծառերի տնկումն, աճեցումը և բերքահավաքը՝ շինարարության, թղթի արտադրության և այլ նպատակների համար:

Ագրոբիզնեսը տնտեսական ոլորտ է, որն ընդգրկում է գյուղատնտեսական, անասնաբուծական և անտառային մթերքների արտադրության, վերամշակման և շուկայավարման հետ կապված գործունեության բոլոր տեսակները:

Ագրոբիզնեսը ներառում է գյուղատնտեսության և գյուղատնտեսության հետ կապված առևտրի տնտեսական ոլորտները: Այն ներառում է գյուղատնտեսական ապրանքները շուկա դուրս բերելու բոլոր քայլերը՝ ներառյալ արտադրությունը, վերամշակումը և բաշխումը: Ագրոարդյունաբերությունը ցանկացած տնտեսության ավանդական մասն է, հատկապես այն երկրների համար, որոնք ունեն վարելահողեր և արտահանման համար գյուղատնտեսական արտադրանքի ներուժ:

Ագրոարդյունաբերությունը վերաբերում է ձեռնարկությունների և մատակարարման շղթաների միջև կապերի հաստատմանը՝ գյուղատնտեսության ոլորտում հատուկ միջոցներ և ապրանքներ մշակելու, փոխակերպելու և բաշխելու համար:

Գյուղատնտեսության ոլորտն այժմ գրավիչ է շատ ձեռնարկատերերի համար: Սա մրգերի և բանջարեղենի աճեցման և վաճառքի, անասունների բուծման և արդյունքում ստացված արտադրանքի վաճառքի աշխատանք է: Ընդհանուր առմամբ, այս ուղղությունը համարվում է շատ խոստումնալից:

Գյուղատնտեսական քաղաքականության առանցքը հանդիսանում է գյուղատնտեսության ինտենսիվացումը, արտադրողականության բարձրացումը, հողային պաշարների նպատակային և ջրային պաշարների խնայողաբար ու արդյունավետ օգտագործումը, պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացումը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, արտադրված արտադրանքի իրացումն ու արտահանման խթանումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների եկամուտների ավելացումը:

Ֆերմերները որպես ձեռնարկատերեր

Ֆերմեր-ձեռնարկատերերն իրենց ֆերմաները համարում են բիզնես: Նրանք իրենց տնտեսությունները դիտարկում են որպես շահույթ ստանալու միջոց և պատրաստ են ձեռնարկել հաշվարկված ռիսկեր՝ իրենց տնտեսություններն էլ ավելի շահութաբեր դարձնելու համար:

Հաջողակ ձեռնարկատեր ֆերմերներն իրենց աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար զինվում են տեխնիկապես, փորձում օգտագործել նորարարական լուծումներ և կարող են ուղղորդել իրենց ֆերմերային բիզնեսը ձեռնարկության հիմնադրումից և զոյատևումից մինչև արագ աճ և հասունություն:

Այնուամենայնիվ, կան բազմաթիվ մարտահրավերներ, որոնց բախվում են այս ֆերմերները՝ սոցիալական և/կամ տնտեսական խոչընդոտներ, կանոնակարգեր, ֆինանսների և տեղեկատվության հասանելիություն և դրանց լուծման հետ կապված բազմաթիվ ռիսկեր և փոփոխություններ:

Ֆերմերը պետք է կշռի հնարավորություններն ու ռիսկերը և որոշում կայացնի դրանց համակցության մասին: Սա առանցքային մարտահրավեր է ֆերմերների համար:

Ֆինանսների և վարկերի հասանելիություն

Տնային սպառման տնտեսությունը ձեռնարկատիրության վերածելու համար ֆերմերից պահանջվում են որոշակի ֆինանսական միջոցներ:

Հնարավոր է կարիք լինի արդիականացնել սարքավորումները, վարձել տրանսպորտ՝ ապրանքը շուկա հասցնելու համար, ընդլայնել արտադրությունը կամ ավելացնել վերամշակման ծավալը:

Ֆերմերների մեծ մասն այս գործընթացները կազմակերպում է սեփական ռեսուրսներով, սակայն նրանք հաճախ ստիպված են լինում փնտրել նաև այլ ռեսուրսներ՝ վարկավորման տեսքով:

Վարկերի հասանելիությունը կարևոր մարտահրավեր է ձեռնարկատեր ֆերմերների համար: Բանկերը և վարկային կազմակերպությունները հաճախ չեն սպասարկում այն տարածքները, որտեղ գտնվում են ֆերմերները:

Որոշ ֆերմերներ հաճախ տեղյակ չեն ֆինանսավորման աղբյուրներից կամ եթե անգամ տեղյակ են, հաճախ չեն կարողանում վարկ ստանալ, քանի որ չունեն պահանջվող գրավ, չունեն վարկային պատմություն կամ նրանց եկամուտները չափազանց ցածր են:

Հայաստանի համար ագրոձեռնարկատիրության մոդելը

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության ամենակարևոր ճյուղերից մեկն է: Այն տնտեսական ակտիվության հիմական աղբյուրն է գյուղական բնակավայրերում և նշանակալի ներդրում ունի երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ):

ՀՀ գյուղատնտեսությունը ոչ միայն ագրոպարենային համակարգի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ և աշխատատար ճյուղն է, որտեղ ներգրավված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների շուրջ 45%-ը:

Գյուղատնտեսությամբ զբաղվում է հիմականում բնակչության ընդհանուր թվի 45,6%-ը, ինչն ապացույցն է այն բանի, որ գյուղատնտեսությունը Հայաստանում նաև սոցիալական մեծ նշանակություն ունի:

Գյուղատնտեսության կայուն աճը կարող է նպաստել ՀՆԱ-ի աճին: Գյուղացիական տնտեսությունները տնօրինում և օգտագործում են վարելահողերի 75,9%-ը, բազմամյա տնկարկների 74,4%-ը և խոտհարքների 44,9%-ը, որոնք ներկայումս ապահովում են գյուղատնտեսական մթերքների արտադրության շուրջ 98%-ը:

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմադրամի (GGF) կողմից ֆինանսավորվող «Կոտայքի մարզի խոցելի գյուղաբնակ կանանց հնարավորության ընձեռում՝ օգտվելու տնտեսական և բնապահպանական հնարավորություններից» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմադրամ
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52
Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ http://www.ruraldaf.am

ԵՐԵՎԱՆ 2024